Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Պետրովկայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զինղեկ /0.5 դրույք/, դասվարի /29 դասաժամ/, աշխարհագրության /6 դասաժամ/, քիմիայի /6 դասաժամ/, կենսաբանության /5 դասաժամ/, ֆիզկուլտուրայի /14 դասաժամ/, երաժշտության /2 դասաժամ/, հայոց եկեղեցու պատմության /2 դասաժամ/, բնագիտության /1 դասաժամ/, իմ հայրենիքի /2 դասաժամ/, հասարակագիտության /3 դասաժամ/, տեխնոլոգիա /3 դասաժամ/, կերպարվեստ /3դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- Ինքնակենսագրություն (ձև 5),
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,զինղեկի համար՝պարտադիր սպայական կոչում
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թ. ապրիլի 17-ից մինչև մայիսի 2-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. մայիսի 7-ին՝ ժամը 12:00-ին**, Պետրովկայի հիմնական դպրոցում, հասցե՝ Լոռու մարզ, գ. Պետրովկա, 2 փ.,1 նրբ., 2 տ: Տեղեկությունների համար զանգահարել 093052644 կամ 094221362 հեռախոսահամարներով: